



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ապրիլի 2006թ.

N 220

ք.Ստեփանակերտ

### ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՎԻ ԴԵՊՔՈՒՄ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 14-րդ հոդվածի կիրարկումն ապահովելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել ընդերքօգտագործման իրավունքի գրավի դեպքում լիազորված մարմնի նախնական համաձայնություն տալու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման նախնական համաձայնությունը տալու լիազորությունները վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարությանն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԼՂՀ վարչապետ**

**Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**

## Կ Ա Ր Գ

### ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՎԻ ԴԵՊՔՈՒՄ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում է ընդերքօգտագործման իրավունքի գրավի (այսուհետ՝ գրավ) դեպքում լիազորված մարմնի նախնական համաձայնություն տալու գործընթացը:

2. Ընդերքօգտագործման իրավունքը կարող է գրավադրվել մինչև դրա գործողության ժամկետի ավարտը, ինչպես նաև՝ անժամկետ:

3. Գրավի նախնական համաձայնության ստացման համար ընդերքօգտագործման իրավունք կրողը (այսուհետ՝ դիմումատու) լիազոր մարմին է ներկայացնում դիմում:

Դիմումին կից ներկայացվում են՝

ա) ընդերքօգտագործման իրավունքը սահմանող փաստաթղթերի պատճենները.

բ) իրավաբանական անձանց դեպքում գրավառու համարվող կողմի պետական գրանցման վկայականի պատճենը.

գ) գրավառու համարվող կողմի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում նախկինում ունեցած և գործող այլ ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալներ, որոնք ներառում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով տրված լիցենզիաների, պայմանագրերի, թույլտվությունների և գրավոր համաձայնությունների համարները, տալու ամսաթվերը և տարեթվերը.

դ) գրավառու համարվող կողմի՝ կառավարմանը մասնակցող անձանց և բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատերերի անունները, ազգանունները և անձնագրի տվյալները.

ե) տեղեկանք գրավի նպատակի և գրավադրման ժամկետի մասին.

զ) այլ տեղեկություններ դիմումատուի ցանկությամբ:

4. Ներկայացված դիմումը սահմանված կարգով գրանցվում է գրանցամատյանում:

5. Լիազոր մարմինը սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում քննարկում է դիմումը և դիմումատուին գրավոր հայտնում է իր նախնական համաձայնության կամ դիմումը մերժելու մասին: Եթե սույն կետով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ գրավոր չի հայտնում դիմումատուին, ապա նախնական համաձայնությունը համարվում է տրված:

6. Լիազոր մարմինը կարող է մերժել դիմումը, եթե՝

ա) դիմումին կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում բերված տեղեկությունները կեղծ են.

բ) լիազոր մարմնի կողմից դադարեցվել է գրավառուի՝ նախկինում ունեցած որևէ ընդերքօգտագործման իրավունքը.

գ) գրավադրման նպատակն ընդերքօգտագործման իրավունքով ստանձնած պարտավորությունների կատարմանը նպաստելը չէ.

դ) դիմումատուի ներկայացված փաստաթղթերը թերի են:

Եթե դիմումատուի ներկայացված փաստաթղթերը թերի են, ապա լիազոր մարմինը 5-օրյա ժամկետում դրա մասին գրավոր տեղեկացնում է դիմումատուին: Դիմումատուն նշված թերությունները վերացնելուց հետո կրկին կարող է դիմել լիազոր մարմին:

Դիմումի մերժման դեպքում որոշման մեջ նշվում են մերժման պատճառները:

Դիմումատուն կարող է դիմումի մերժման վերաբերյալ գրության մեջ նշված թերությունները վերացնելուց հետո կրկին դիմում ներկայացնել լիազոր մարմին:

7. Դիմումի մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավի պայմանագրի կնքումից հետո 10-օրյա ժամկետում պայմանագրի մեկ օրինակը ներկայացվում է լիազոր մարմին:

9. Ներկայացված պայմանագրի տվյալները լիազոր մարմնի կողմից գրանցվում են սույն կարգի 4-րդ կետում նշված գրանցամատյանում:

10. Դիմումատուի կողմից ընդերքօգտագործման գրավի պայմանագրային պարտավորությունների չկատարման դեպքում դիմումատուի՝ ընդերքօգտագործման իրավունքները անվերապահորեն անցնում են գրավառուին: Լիազոր մարմինն ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումն իրականացնում է 10-օրյա ժամկետում՝ օրենքով սահմանված կարգով:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Ս. Գրիգորյան**